

ՄԱՆԿԱՊԱՏՄԱՆԵԿԱՆ

ՀՈՐԻՉՈՆ

ՅԱԻԵԼՈՒԱԾ «ՀՈՐԻՉՈՆ» ՆԱԲԱԹԱԹԵՐԹԻ

Դեկտեմբեր 2021



Մեր խօսքը

Սիրելի Աշակերտներ,

Ճիշդ է, որ համաճարակի ստեղծած պայմանները հաճելի չեն. մենք առաջուան նման ազատություններ չունինք. պէտք է յարգենք թագաժահրի պարտադրած օրէնքները: Ճիշդ է նաեւ, որ Արցախի 44 օրեայ պատերազմէն ետք, դիրքին չեղաւ մեր կեանքը. բայց հայու վերանորոգ ոգիով, հայու ստեղծագործ միտքով եւ ձեռք-ձեռքի տալով ժամն է անցնելու գործի:

Շուտով 2021 տարին կը հասնի իր աւարտին: Պահ մը կեդրոնանաք եւ արձանագրենք թէ ինչ իրագործեցինք այս տարուան ընթացքին: Մեր դասերուն կողքին, ինչպիսի աշխատանքներով օգտակար եղանք մեր գաղութին, մեր դպրոցին կամ մեր եկեղեցիին: Ինչ ըրինք Հայաստանի ու Արցախի մեր հայրենակիցներուն: Արդե՞օք օգնութեան ձեռք երկարեցինք Լիբանանի կամ Սուրիոյ մէջ ապրող մեր ազգի զաւակներուն:

Մտածենք այս հարցումներուն մասին եւ գործով անցնինք առաջ: Մտածենք, որովհետեւ մենք հայ ազգի զաւակներ ենք: Ինչպէս որ մեր մեծ պապիկներն ու մեծ մամիկները կրցած են յաղթահարել բոլոր դժուարութիւնները եւ հասցուցած են մեզ հոս, մենք ալ պիտի աշխատինք պահելու մեզի փոխանցուածը ու մեր ամէն ուժերով պայքարինք մեր լաւը տալու մեր յաջորդներուն:

Թող մեր իւրաքանչիւրին տարին ըլլայ բարի, լուսաւոր եւ խաղաղ:

ԿԱՂԱՆԴ ՊԱՊԱ

Ժամանակին Նիկողայոս անունով շատ բարի եպիսկոպոս մը կար: Ան ապրած է 4-րդ դարուն՝ մեծահարուստ ընտանիքի մը մէջ :

Դժբախտաբար, մանկութենէն կը կորսնցնէ իր ծնողքն ու կ'անցնի մօրեղբօր խնամակալութեան տակ:

Օր մը, Սուրբ Գիրք կարդացած ժամանակ, կը հանդիպի տողի մը, որ իր կեանքը ամբողջութեամբ կը փոխէ: Տողը հետեւեալն էր. **«Եթէ կ'ուզես կարարեալ ըլլալ, գնա՛, ինչ որ ունիս ծախէ եւ աղքատներուն տուր, այդպիսով երկինքի մէջ գանձ պիտի ունենաս»:**

Այդ օր ան կ'որոշէ օգնել բոլոր անոնց՝ որոնք կարիք ունէին օգնութեան:

Նիկողայոս ծպտուած կը սկսի օգնել կարիքաւորներուն, որպէսզի չճանչնան զինք. օրինակ՝ անգամ մը ոսկեայ դրամներ կը նետէ տունի մը պատուհանէն ներս, որպէսզի օգնած ըլլայ այդ տան մէջ ապրող երեք քոյրերու, որոնք աղքատ էին:

Բարի եպիսկոպոսը կը մահանայ, բայց իր անունը կը տարածուի աշխարհի չորս կողմերը:

Գերմանացիները նոր տարին կ'անուանեն Սուրբ Նիկողայոսի տօն, Հոլանտացիները՝ Սուրբ Գլաուսի տօն...:


Սուրբ Նիկողայոս նաեւ կրչուած է Սքանչելագործ Հայրապետ:



Հպարտ եմ որ հայ եմ, ինձի նման հայ է Ջաքար Քէշիշեանը

Ջաքար Քէշիշեան ծնած է Լիբանան 1968-ին: Ան պատուոյ յիշատակութեամբ աւարտած է Երեւանի Կոմիտասի անուան պետական երաժշտանոցը, իբրեւ շուիահար եւ իբրեւ խմբավար: Դասախօս է Լիբանանի պետական բարձրագոյն երաժշտանոցի, Համազգային Բարսեղ Կանաչեան երաժշտական քոլէճի ինչպէս նաեւ Լիբանանի Հայկազեան համալսարանի: Բոլորին կողմէ սիրուած Պարոն Ջաքարը հիմնած, ղեկավարած ու խմբավարած է մանկական, պատանեկան եւ երիտասարդական տարբեր երգչախումբեր ինչպէս՝ «Կաքաւիկ», «Ծիածան», «Վարանդա», «Կարկաչ», «Այգ», «Շնորհալի»:

Երեւանի պետական երաժշտանոցի մէջ ուսանած ժամանակ, տեղի կ' ունենայ Սպիտակ քաղաքի երկրաշարժը եւ ան կը մեկնի Գիւմրի, համերգներով ուժ տալու եւ իր օգնութիւնը բերելու աղէտեալ գօտիի բնակիչներուն: Իսկ երբ 1992-ին, հայ քաջերու շնորհիւ կ'ազատագրուի Արցախը, Պարոն Ջաքարը կ'երթայ Շուշի եւ կը հիմնէ ու կը խմբավարէ «Վարանդա» մանկական, պատանեկան եւ երիտասարդական երգչախումբերը:



Կոմիտասի անուան պետական երաժշտանոց

1992-էն ի վեր, ամէն տարի, ամառնային արձակուրդներուն, երկու ամիս Պարոն Ջաքար կը մնայ Արցախ, որպէսզի «Վարանդա»-ի իր սաներուն հետ երգի փորձեր կատարէ եւ ելոյթներով խանդավարէ Արցախի հայութիւնը:

Անցեալ տարի սակայն, համաճարակի պատճառով, երբ թոնիքները կեցած էին, ան չկրցաւ գտնուիլ Շուշի:

Համաճարակին վրայ աւելցաւ նաեւ 44 օրեայ պատերազմը... բայց քաջ գիտնալով, որ երգն ու երաժշտութիւնը կը հանգստացնեն ցաւած սրտերը եւ կը քաջալերեն ժողովուրդը, Պարոն Ջաքար այս անգամ եւս, կը մեկնի Արցախ, բայց այս անգամ կը մնայ Ստեփանակերտ, որովհետեւ ալ չկար արծուաբերդ Շուշին եւ Շուշիի «Արամ Մանուկեան» վարժարանը, ուր 27 տարի շարունակ տեղի կ'ունենային երգչախումբերու փորձերը... Ամէն ազգասէր հայու նման, ցաւով լեցուած է Պարոն Ջաքարի հոգին, բայց ան յոյսը միշտ վառ պահած, հաւատքով ու նուիրումով անցաւ գործի:

2 սեպտեմբեր 2021-ին, Արցախի Հանրապետութեան հռչակաման 30-ամեակին առիթով, կատակասէր ու ժպտաղէմ խմբավարը «Երգող Արցախ» խորագրով, «Վարանդա» երգչախումբի երիտասարդական կազմին հետ համերգ մը կը յաջողցնէ: Աւելի ուշ, 15 սեպտեմբեր 2021-ին, ան արցախեան բազմահազար հին թէ նոր ազատամարտիկներու յիշատակին շուրջի եւ տուտուկի նուագներով ելոյթ մը կու տայ:

Պարոն Ջաքար իր երգչախումբերուն հետ հարիւրաւոր համերգներով հանդէս եկած է եւ այս աշխատանքով, հին ու դասական երգերու կողքին, հարիւրաւոր նոր երգերով հարստացուցած է հայ մշակոյթը:

Պարոն Ջաքար տաղանդաւոր արուեստագէտ մըն է, հայրենասէր հոգեբան մը եւ մաքուր հայ մը: Ան պարգեատրուած է բազմաթիւ շքանշաններով եւ պատուոյ գիրերով:

Կարելի է գիրք մը գրել Պարոն Ջաքարին մասին. ճանչնանք զինք եւ մենք ալ ձիրքերով եւ մեր կարողութիւններով հետեւինք իր օրինակին:



«Gate To Heaven» - «Դրախտի Դարպասը»

Հոկտեմբեր 2021-ին, առիթը ունեցանք վայելելու Ջիվան Ավետիսեանի «Gate To Heaven» - «Դրախտի Դարպասը» ֆիլմը:

44 օրեայ պատերազմի սկիզբը, այս ֆիլմը ընդունուած էր Մոսկուայի ֆիլմի փառատօնի պաշտօնական յայտագիրին մէջ. բայց Թուրքիոյ եւ Ատրպէյճանի ճնշումով վերջին վայրկեանին ամբողջովին քաշուեցաւ յայտագիրէն: Հակառակ ստեղծուած դժուար պայմաններուն Ջիվանն ու իր խումբը չյուսահատեցան եւ շարունակեցին իրենց աշխատանքները: Աւելի ուշ, Ontario International Film Festival-ը պաշտօնապէս տեղեկացուց թէ Ջիվան Ավետիսեանի այս ֆիլմը շահած է հետեւեալ 4 գլխաւոր մրցանակները.

- 1-Լաւագոյն ձայնային ձեւաւորում միջազգային ֆիլմի բաժնին մէջ – Best Sound for an International Feature
- 2-Լաւագոյն երաժշտութիւն միջազգային ֆիլմի բաժնին մէջ – Best Music for an International Feature
- 3-Լաւագոյն ֆիլմային սցենար միջազգային ֆիլմի բաժնին մէջ – Best Script for an International Feature
- 4-Լաւագոյն միջազգային ֆիլմ – Best International Film

«Դրախտի Դարպասը» ֆիլմը, Ջիվան Ավետիսեանի երրորդ ֆիլմն է արցախեան նիւթով: Այս գծով բեմադրիչի նախորդ ֆիլմերն են «Թեանիկը» (2014) եւ «Վերջին Բնակիչը» (2016): Ջիվան Ավետիսեան իր ֆիլմերով կը փորձէ աշխարհին ներկայացնել Արցախը եւ Արցախի Պատմութիւնը:

Շուտով կը յայտնուի Ջիվանի «Revival» - «Վերածնունաձը» եւ «Black List» - «Սեւ Ցուցակ» ֆիլմերը: Քաջալերելի է մեծ թիւով ներկայ գտնուիլ այս ֆիլմերուն, երբ անոնք կը ցուցադրուին մեզ մօտ: Այս իմաստով, խօսինք նաեւ մեր շրջապատի օտարներուն, որպէսզի իրենք ալ տեղեակ ըլլան Արցախի մասին, գիտնան Արցախի իրաւ պատմութիւնը եւ ճանչնան Արցախի Հանրապետութիւնը:


ԱՐԹՈՒՆ ԸԼԼԱՆՔ

Թշնամին փորձեց Ջիվան Ավետիսեանին թափը կտրել ու իր աշխատանքը փճացնել, բայց չյաջողեցաւ: Ջիվանը միջազգային մրցանակներու արժանացաւ, որովհետեւ ան գիշեր-ցերեկ կ'աշխատի, կը հաւատայ իր ուժերուն եւ կը հետպնդէ իր երազները:

Թշնամին, ամէն օր, կը փորձէ փոխել մեր պատմութիւնը եւ գողնալ մեր մշակոյթը: Ան կը քանդէ մեր եկեղեցիները, յուշարձաններն ու գերեզմանները: Ան կ'ուզէ ջնջել մեր հետքերը եւ խանգարել մեր աշխատանքները: Մեր թշնամին կ'ուզէ մեզի տեսնել տկար եւ տխուր: Ան կ'ուզէ մեզի տեսնել բաժան-բաժան: Առիթ չտանք անոր որ ուրախանայ: Այլ ընդհակառակը միշտ քով-քովի գալով, միշտ իրար լսելով ու յարգելով, աշխատինք զիրար սիրելով: Մենք ալ, Ջիվանին նման, աշխատինք յամառօրէն, մեր յոյսերը բարձր պահելով, հասնելու համար մեր երազներուն:

Նոր Տարուան հետ, նոր յոյսերով. նոր եռանդով ծրագրենք. դնենք իրագործելի կէտեր եւ գործենք քայլ առ քայլ հասնելու համար մեր նպատակներուն:

**ԹՈՂ ԲՈԼՈՐԻՆ ԿԱՂԱՆԴԸ ԸԼԼԱՅ ԲԱՐԻ
ՇՆՈՐՀԱԻՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ**



Գիտէիր թէ...

- Շատ հին ժամանակներուն հայերը նոր տարին նշած են 21 Մարտին՝ գարնանային գիշերահաւասարի օրը, որ նաեւ բնութեան զարթօնքի խորհրդանիշն էր:
- Հայոց երկրորդ նոր տարին կը նշուէր 1 Նաւասարդին, (այսինքն՝ 11 Օգոստոսին)՝ այն օրը, երբ հայոց հիմնադիր Հայկ Նահապետը յաղթեց Տիտանեան Բելին:
- 18-րդ դարուն Սիմէոն Երեւանցի կաթողիկոսը կ'որոշէ, որ Յունուարին 1-ը հայերու Ամանորը ըլլայ:
- Հին Հայաստանի մէջ կ'արգիլուէր սեղանին վրայ մսեղէն դնել, որովհետեւ Նաւասարդը պահքի օր էր:
- Կաղանդի առաջին տօնածառը զարդարուած է Գերմանիոյ մէջ, 16-րդ դարուն:
- Տարբերուելու համար ուրիշ ազգերէ եւ փաստելու մեր ինքնութիւնը, մենք՝ հայերս եւս ունեցած ենք մեր ազգային տարազը:
- Հայկական տարազի մէջ մեծ կարեւորութիւն ունեցած են Երկրի չորս տարրերու՝ հողի, ջրի, օդի և կրակի գոյները:

Ո՛վ կ'ուզէ ըլլալ բազմազէտ

1) Հին ժամանակ հայերը նոր տարին երբ նշած են:

- 21 Մարտ
- 28 Մայիս
- 21 Յունիս

2) Ո՛վ կ'որոշէ որ Յունուար մէկը պէտք է հայերուն Ամանորը ըլլայ:

- Մովսէս Խորենացի
- Սիմէոն Երեւանցի
- Կաղանկատուացի

3) Հին ժամանակ Նաւասարդը պահքի օր էր:

- Ճիշտ
- Սխալ

4) Կաղանդի առաջին տօնածառը զարդարուած է Հայաստանի մէջ, 16-րդ դարուն:

- Ճիշտ
- Սխալ

5) Որո՞նք են Երկրի չորս տարրեր:

6) Կրնան ամփոփ կերպով ներկայացնել Կաղանդ Պապան:

7) Զաքար Քէշիշեան երաժշտական ուսում ստացած է

- Լիբանանի Պետական Երաժշտանոցին մէջ
- Երեւանի Կոմիտասի անուան պետական երաժշտանոցին մէջ
- Շուշիի Պետական Երաժշտանոցին մէջ

8) Զաքար Քէշիշեանը՝

- դաշնակահար է
- ջութակահար է
- շուփահար է

9) Ճիւան Աւետիսեանը հայ ... մըն է:

- Երգիչ
- Քանդակագործ
- Բեմադրիչ

10) Հայկական որ ֆիլմը առաջադրուած է Golden Globe Awards 74-րդ մրցանակաբաշխութեան:

- The promise
- The last inhabitant
- The cut



Մանկապատանեկան Զորիգոնը կը հովանաւորեն ՀՕՄ-ի Գանատայի Շրջանային վարչութիւնը եւ Գանատայի շրջանի իր 10 մասնաճիւղերը

Յեռաձայն (514) 332-3757
Յեռապատճէն (514) 332-4870
Email: sylvia@horizonweekly.ca

Թիւր պատրաստեց՝
Անահիտ Պալեան